ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

Էմիլ Գրիգորյանի անվան Երևանի Ոսկերչական գործարան ԲԲԸ-ն ՊՊԾ-ԷԱՃԱՊՁԲ-2025/41 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի				
	ֆիրմային անվանումը	ապրանքային նշանը	մակնիշը	արտադրողի անվանումը	տեխնիկական բնութագիրը
1	Էմիլ Գրիգորյանի անվան Երևանի Ոսկերչական գործարան ԲԲԸ	Էմիլ Գրիգորյան	Էմիլ Գրիգորյան	Էմիլ Գրիգորյանի անվան Երևանի Ոսկերչական գործարան ԲԲԸ	1. «ՀՀ պետական պահպանության ծառայության 30 տարի» հոբելյանական մեդալը (այսուհետ՝ մեդալ) բաղկացած է երկու մասից՝ կախիչից և դրան կապօղակով ամրացված ութ գագաթներով բազմանկյուն մեդալից: Կախիչը պատրաստվում է թեթև մետաղից և ունի հնգանիստ բազմանկյան ձև, որը պաստառապատված է մուգ կապույտ, կենտրոնական մասում չորս հավասարաչափ լայնության դեղին զոլերով մետաքսյա 24մմ լայնություն ունեցող ժապավենով: Կախիչի աջ և ձախ կողմերի

						բարձրությունները նույնն են՝ 39մմ: Կախիչի վերևի մասի երկարությունը 27մմ է, ներքևինը՝ 47մմ, հաստությունը՝ 1մմ: Կախիչի վերին մասի կենտրոնից մինչև ներքին գագաթը 50մմ է: Կախիչը հակառակ երեսում ունի հատուկ ամրակ՝ պարգևատրվածի հագուստին ամրացնելու համար: Մեդալը ոսկեգույն է, պատրաստված պղնձի հատուկ համաձուլվածքից, ունի 48,5մմ արտագծած տրամագիծ, հաստությունը 3,0մմ է, որի սահմանային շեղումը կարող է լինել 0.05մմ, քաշը՝ 36 գրամ: Մեդալի դիմերեսի կենտրոնում պատկերված է Հայաստանի Հանրապետության պետական պահպանության ծառայության խորհրդանիշը: Մեդալի ներքևի մասում կորության վրա գրված է «30 ՏԱՐԻ»: Մեդալը դարձերեսի կողմից ունի «1992», «2022» գրվածքները: Մեդալի միանմանությունն ապահովելու համար այն պատրաստված է հատուկ պրուֆ տեխնոլոգիայով և դրոշմման եղանակով: Մեդալի տուփ: Տուփի չափսերը՝ 100x110մմ, բարձրությունը 30մմ, կազմված

					կազմարարական 2մմ հաստությամբ ստվարաթղթից, երեսպատված դիզայներական պլայկ թղթով: Տուփի հատակը պատված է արհեստական թավիշով, որի վրա տեղադրված է սպունգ 10մմ հաստությամբ: Ներսի կենտրոնական հատվածում մեդալի չափսերին համապատասխանող կտրվածքով՝ արհեստական թավշեպատ, իսկ մեդալը վերևից փակվում է տուփի փակվող հատվածի ամբողջ երկայնքով 4մմ հաստությամբ սպունգով: Տուփի կափարիչը մի կողմից ամրացված է տուփին, իսկ դիմացի մասից փակվում է նիադիմովի մագնիսով (10մմ տրամագիծ, 2մմ հաստություն, N 35 ուժով): Տուփի դիմերեսի վրա առկա է համապատասխան լոգոտիպի UV տպագրություն: Տուփի գույնը համաձայնեցնել պատվիրատուի հետ: Թույլատրելի շեղումը ±5մմ:

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

Ереванский ювелирный завод имени Эмиля Григоряна ОАО в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՊՊԾ-ԷԱՃԱՊՁԲ-2025/41 ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар				
	фирменное наименование	товарный знак	марка	наименование производителя	технические характеристики
1					